ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ

/ԹԻՄԱՅԻՆ/

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

28 նոյեմբերի 2025թ, 16:00

1. **ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ**
   Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
2. **ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ**
   Ալֆա Ֆարմ ՓԲԸ
3. **ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**
   Գ մրցաշարը կանցկացվի թիմային ձևաչափով, ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 6-7 խաղափուլով /կախված մասնակից թիմերի քանակից/:
   Գ մրցաշարին կարող են մասնակցել մինչև 18 տարեկան շախմատիստները, ում և՛ ազգային, և՛ միջազգային վարկանիշը չի գերազանցում 2150-ը /2025 թվականի մայիսի 1-ի դրությամբ/:
   *Մասնակիցների թե՛ ազգային, թե՛ միջազգային վարկանիշները չպետք է գերազանցի վերը նշված վարկանիշը:
4. **ՄՐՑԱՆԱԿՆԵՐ**

   ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԸ **կանցկացվի 2 փուլով:**

   Գ ՄՐՑԱՇԱՐԻ 2 փուլերի արդյունքում հաղթող թիմի համար՝ անլար ականջակալ:

   Մրցաշարերի երկրորդ փուլի համար նախատեսված են հետևյալ մրցանակները.

Գ մրցաշար		
Հիմնական մրցանակներ	**I**	**Երևան Պարկի տոմսեր**
	II	**Թատրոնի տոմսեր**
	III	**Կինոդիտման տոմսեր**
Հատուկ մրցանակներ. լավագույն արդյունք ցույց տված մասնակից	1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/	**Ակադեմիայի ամանորյա կայծակնային շախմատի մրցաշար անվճար մասնակցություն**
	Աղջիկ մասնակից /առնվազն 4 խաղ խաղալու դեպքում/	**Կոսմետիկ փաթեթ**

5. **ԺԱՄԿԵՏՆԵՐ**
   Մրցաշարի երկրորդ փուլը տեղի կունենա 2025 թվականի նոյեմբերի 28-ին, ժամը 16:00-ին:

6. **ՄՐՑԱԿԱՐԳ**

   Գ մրցաշարը կացնկացվի թիմային հաշվարկով.

Մրցաշարը կանցկացվի թիմային հաշվարկով՝ 4 խաղատախտակով (ցանկության դեպքում + 1 պահեստային խաղացող): Այն խաղացողները, ովքեր մեկ կամ ավելի խաղ խաղացել են որևէ թիմի կազմում, իրավունք չունեն խաղալու այլ թիմի կազմում հաջորդ փուլի ընթացքում:

Յուրաքանչյուր մրցախաղում թիմային հաղթանակը գնահատվում է 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր: Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարը, թիմերի միջև անհատական հանդիպման արդյունքը, ըստ խաղատախտակների վրա ցույց տված արդյունքի (1, 2, 3, 4 խաղատախտակներ):

Եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե):

Եթե խաղատախտակների վրա 2 և ավելի խաղացողներ ձեռք են բերել հավասար միավորներ, ապա որպես լրացուցիչ ցուցանիշ հաշվի է առնվելու իրենց հակառակորդների միջին գործակիցները:

7. ԺԱՄԱԿԱՐԳ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

8. ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Գ մրցաշարի մասնակցության վճարը յուրաքանչյուր թիմի համար կազմում է 20 000 ՀՀ դրամ:

Փոխանցումները անհրաժեշտ է կատարել հետևյալ բանկային հաշվին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ,

Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ, Հ/հ՝ 1570091773770100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել գրանցվող թիմի անունը, կոնտակտային հեռախոսահամար, մասնակցության վճար:

9. ԳՐԱՆՑՈՒՄ

Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետն է 2025 թվականի նոյեմբերի 27-ը, ժամը 18:00-ն:

Հայտը **/Թիմի անուն, շախմատիստների անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տվյալներ, կարգ/վարկանիշ, կոնտակտային հեռախոսահամար/** կարող եք ուղարկել info@chessacademy.am էլեկտրոնային հասցեին:

10. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ

Մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում /ք. Երևան, Շևչենկո 34/:

11. ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473